



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

« 19 » փետրվարի 2024թ.

ՀՐԱՄԱՆ N 80-Ա

«ՇԻՐԱԿ ԱՎԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1936-Ն որոշման հավելվածով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2024 թվականի հունվարի 12-ի թիվ 7-Ա հրամանի 1-ին կետը, 2021 թվականի հոկտեմբերի 14-ի N 529-Ա հրամանով տրամադրված N 04 հավաստագիրը, 2022 թվականի նոյեմբերի 16-ի N 576-Ա հրամանի N 1 հավելվածը և «Շիրակ Ավիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2024 թվականի փետրվարի 8-ի թիվ SA-1419 գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նկատի ունենալով, որ «Շիրակ Ավիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ծմեռային ժամանակահատվածում՝ 2024 թվականի փետրվարի 17-ից՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Ուֆա/ՍՄՍՍ/ երթուղով Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային


հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին, հետևաբար Ընկերության միջոցով Երևան/UDYZ/-Ուֆա/UWUU/ երթուղով մեկնող ուղևորների վրա տարածվում է «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» ենթակետով սահմանված արտոնությունը:

2. Սահմանել, որ սույն հրամանի առաջին կետով նշված Երևան/UDYZ/-Ուֆա/UWUU/ ուղղության համար արտոնության տրամադրման սկիզբը 2024 թվականի փետրվարի 17-ն է՝ 23 ամիս ժամկետով՝ ամիսների նվազման կարգով՝ հաշվի առնելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2024 թվականի հունվարի 12-ի թիվ 7-Ա հրամանի 1-ին և 2-րդ կետերը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի հանձնումն Ընկերությանը:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

 Recoverable Signature

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ